

ՌԱՊԱՆՈՒԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԵՒ ՀԱՅԵՐԷՆԻ ՍԵՌ ԵՒ ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԿԱՊԵՐ ՄԱՏՆԱՆԾՈՂ ԵԶՐԵՐԻ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ազգակցական կապեր մատնանշող բառերը, որպէս լեզունների հնագոյն (արխաիկ) շերտից աւանդուած իրողութիւն, լեզուի հիմնական բառապաշարի կարեւոր բաղկացուցիչներէց են, այդ իսկ պատճառով էլ՝ լեզուների ցեղակցական կապերի բացայայտման վստահելի միջոց:

Հայերէնի եւ պոլիներգական լեզուների միջեւ բացայայտուած տարատեսակ ընդհանրութիւնների համակարգի մէջ եւս իրենց բացառիկ կարեւորութեամբ առանձնանում են ազգակցական կապեր մատնանշող բառերն ու արտայայտութիւնները:

Հնդեւրոպական լեզուների բառապաշարի այս խիստ կարեւոր մասը բաւականին մանրամասնօրէն ուսումնասիրուած է: Համեմատական ուսումնասիրութիւնների արդիւնքում բացայայտուել է հայերէնին վերաբերող չափազանց ուշադրաւ մի փաստ. հայերէնը նախանձելի պահպանողականութիւն է դրսեւորել ազգակցական եզրաբանութեան նկատմամբ՝ պահպանելով բոլոր հին հնդեւրոպական ազգակցական եզրերը (բացի մէկից՝ *nepōt-), ի տարբերութիւն միւս հնդեւրոպական լեզուների, որոնք կորցրել են կա՛մ բոլոր, կա՛մ էլ բազմաթիւ ազգակցական եզրեր: Այս երեւոյթն առաւել եւս յատկանշական է այնպատճառով, որ, ընդունուած կարծիքի համաձայն, հայերէնը կորցրել է իր հնդեւրոպական բառապաշարի մի պատկառելի մասը¹:

Զատիկի կղզու՝ մեզ հասած բանահիւսական ժառանգութեան մէջ բարեբախտաբար լայնօրէն ներկայացուած է բառապաշարի այս անչափ կարեւոր շերտը: Ազգակցական տարատեսակ յարաբերութիւններ ցոյց տուող ռապանութեան² բառերն ու բառակա-

1 ՊԵՏՐՈՍԵԱՆ, Ա., *Շնորհ ի վերուստ. առասպել, ծէս, պատմութիւն. Յոյուածների ժողովածու նուիրուած Սարգիս Յարութիւնեանի ծննդեան 80-ամեակին*, Երևան 2008, 10-18:

2 Զատիկի կղզու (տեղաբնիկների լեզուով՝ Rapa Nui) լեզուի անուանում:

պակցութիւնները, ինչպէս եւ սպասելի էր, մեծաւ մասամբ համընկնում են պոլինեզական միւս լեզուների համապատասխան եզրերին (գոյութիւն ունի նաեւ ազգակցական եզրերի մի փոքր խումբ՝ 8 բառ³, որն անմիջական զուգահեռներ չունի միւս պոլինեզական լեզուներում, բայց այդ մասին՝ վերջում): Պոլինեզական լեզուների, այդ թւում նաեւ ռապանուերէնի սեռ եւ ազգակցական յարաբերութիւններ մատնանշող եզրերը լեզուական տեսակէտից բաւարար չափով ուսումնասիրուած չեն: Այնուամենայնիւ, մենք կը փորձենք ստուգաբանել սեռ եւ ազգակցական յարաբերութիւններ արտայայտող ռապանուերէն բառերն ու բառակապակցութիւնները՝ միաժամանակ համադրելով դրանք համապատասխան հայերէն զուգահեռների հետ:

Ռապանուերէնի, նաեւ ցանկացած հնագոյն լեզուի ազգակցական եզրաբանութիւնը հասկանալու համար առաջին հերթին անհրաժեշտ է յիշել, որ հնում մարդը նոյնացուել է ծառի հետ: Օրինակ, իտրենացին գրում է. «Արդ գկայիման չորրորդ ի նոյէ ամենայմին ի ժամանակագրացն գրեն, եւ ի Սեմայ երրորդ: Նոյմպէս եւ զԹիրաս՝ չորրորդ ի նոյէ, իսկ ի Յաբեթայ երրորդ. Թէպէտ եւ ըստ մերում Թարգմանութեանս ոչ ուրեմ ի բնագրի գտանի»⁴ (այստեղ եւ յետ այսու՝ ընդգծումները՝ Լ. Ս.):

Նոյն գրքի «Ծանօթագրութիւններ» բաժնում կարդում ենք. «Այս խօսքը (ի բնագրի -Լ. Ս.) տեղիք է տուել այլ ընդ այլ մեկնութիւնների, քանի որ մեր հայերէն Թարգմանութեան մէջ Թիրասը յիշուում է. «ի բնագրի» քառը քննադատները հասկացել են այժմեան նշանակութեամբ, այնինչ հեղինակը այն գործ է ածել մախմական նշանակութեամբ՝ ծառի բուն, հակադրութեամբ նրա ճիւղերի: Ծնունդաբանականի մէջ ուղղակի վերելքի կամ վայրէջքի գիծը կազմում է բունը (հայր-որդի-թոռ-թոռնորդի-թոռան թոռ եւ այլն), իսկ կողմնակի սերունդները (եղբայրը, սրա եղբայրը, որդին եւ այլն) կազմում են ճիւղեր»⁵:

Այս (մարդ-ծառ) նոյնացումը վերոյիշեալ (բնագիր) բառից զատ ամենաարխաիկ մակարդակով արտացոլուած ենք գտնում նաեւ հայերէն «տոհմածառ» բառի մէջ: Սա բանալի է, որ ինչպէս կհամոզուենք յետագայ չարադրանքի ընթացքում, թոյլ է տալիս հասկանալ պոլինեզացիների ամբողջ ազգակցական եզրաբանութիւնը:

3 ФЁДОРОВА, И., Мифы и легенды острова Пасхи, Ленинград 1988, 245.

4 ԽՈՐԵՆԱՑԻՄ., Հայոցպատմութիւն, Երեւան 1981, 22:

5 Անդ, 461:

ՍԵՌ

Ռապանուներէնում մարդու (եւ/կամ կենդանու) սեռը նշելու համար գործածւում են հետեւեալ բառերն ու բառակապակցութիւնները. tamaaroa (tama aroa), tama roa եւ tamahahine (tama ha-hine), tama a-hine, որտեղ բուն սեռի ցուցիչները roa/aroa եւ hine բառերն են:

ա) tamaaroa (tama aroa), tama roa բառակապակցութիւնները նշանակում են «արական, տղայ, արու»: Ռապանուներէն aroa «արական, տղայ, արու» բառն ակնյայտօրէն համապատասխանում է «բնիկ» հայերէն առն (այր) արմատին (հմմտ. նաեւ ռապ. Ariari «ամուր, ուժեղ» - հայերէն առնական «ուժեղ», արեկ «գօրեղ, գօրաւոր»): Ենթադրւում է, որ առն ձեւն առաջացել է մի հնագոյն *արան ձեւից, քանի որ այդ բառի հնագոյն սեռականն ու տրականը եղել է *արան, բցո. արանէ, իսկ եզակի գործ. եւ յոգնակի սեռ., տր., բցո., գործ. ձեւերն են՝ արամբ, արանց, արամբ⁶:

բ) tamahahine (tama ha-hine), tama a-hine՝ իգական, աղջիկ, մարի, էգ»: Ռապանուներէն ha-hine, a-hine, va-hine, vie բառերն ունեն «կիմ» իմաստ, իսկ hine արմատն առանձին՝ նաեւ «կանացի»: Այն համապոլինեզական արմատ է. նԱՆ⁷ *binay, նՊՆ⁸ *fine, ռապանուներէն hine, տոնգա fine, սամոա fafine, մարկիզերէն tamahahine, թաիթերէն vahine, հաւայերէն wahine, մաորի hine, տուամոտու vahine եւ այլն:

Ռապանուներէն լեզուին յատուկ է h/k լծորդութիւն⁹, որ գործում է նաեւ ռապանուներէն-հայերէն զուգահեռներում: Բերենք օրինակներ. ռապ. hutihuti «հաւաքել»- հայ. կոյտ «բարդ, խումբ, քաղմութիւն», որից ունենք բրբ. (Ղրբ.) կռլտ (անել), կռլտկռլտ (անել) «հաւաքել, կուտակել», ռապ. hamene «ցանկանալ» - հայ. կամ «ուզելը, յօժարութիւն, ցանկութիւն», որից՝ կամենալ «ցանկանալ», ռապ. hau «անձրելի կաթիլ» - հայ. կաթ «շիթ, կայլակ, կաթիլ», ռապ. havahava (hava-hava) «կաւայիմ»- հայ. կաւ «շաղուած հող, բրուտի կաւ» եւ այլն:

Այս օրինաչափութեան արդիւնքում ռապանուներէն hine արմատը նոյնանում է բնիկ հայերէն կիմ բառի հետ:

Այսպէս, պարզեցինք, որ ռապանուներէն լեզուի սեռի ցուցիչ հանդիսացող roa/aroa «արական, տղա, արու» եւ hine «կանացի» բառերը նոյնական են բնիկ հայերէն այր (առն) եւ կիմ բառերին:

6 ԱՌԱՔԵԼԵԱՆ, Վ., Գրաբարի քերականութիւն, Երեւան 2010, 70:

7 Նախաաւստրոնեզերէն:

8 Նախապոլինեզերէն:

9 ФЕДОРОВА, И., Мифы и легенды острова Пасхи, Ленинград 1988, 84.

ԶԱՐԾ

Վերոյիշեալ բառակապակցութիւններում կրկնուող tama, բազմիմաստ արմատը նշանակում է ե՛ւ 1) «բում», «ընծիւղ, շիւ», ե՛ւ 2) «երելայ», դրանով իսկ դարձեալ փաստելով մարդ-ծառ նոյնականացումը հնագոյն ժողովուրդների պատկերացումներում, որն արտացոլուած ենք գտնում նաեւ լեզուում:

Առաջին բաց վանկից յետոյ ը ածականի յաւելման յայտնի օրինաչափութիւնը գործում է նաեւ ռապանուերէն-հայերէն բառային զուգահեռներում. օրինակ՝ ռապ. kai «ուտելիք»- բնիկ հայ. կերկուր «կերակուր, ուտելիք (մամաւանդ անասունների ուտելիք կամ ձկան խայծ)», ռապ. hu «բոց»- բնիկ հայ. հուր «կրակ», ռապ. tau «տարի, ժամանակաշրջան»- հայ. տարի «տարի», դար «հարիւր տարուայ ժամանակաշրջան», ռապ. pito «պորտ» - հայ. պորտ «պորտ», ռապ. mutu «շուրք (մարդու)» - հայ. մ(ը)ռութ «քիթ-քերան, դուն», ռապ. kaui «կարել»- հայ. կար «կարելու գործողութիւնը, կարելը, կարած բանը», ռապ. haki «իհարկէ»- հայ. հարկիւ, առ հարկի, ըստ հարկի «հարկադրուած լինելով, հարկից ստիպուած» եւ ի հարկ է, հարկաւ «անշուշտ, անտարակոյս» եւ այլն:

Հնչիւնական այս օրինաչափութեան հաշուառման արդիւնքում, նաեւ իր արտայայտած առաջին՝ «ընծիւղ, շիւ» իմաստով այն (tama'-ը) նոյնանում է հայերէն բոբ. քառմա բառին: Վերջինս հայերէնում փոխառութիւն է համարւում եւ ունի հետեւեալ իմաստները. ա) «ձողերով սարքած սարփիմայ, որի վրայ ձգուում, տարածուում է խաղողի վազը» (հմմտ. լուվ. Tarma «մեխել, ամրացնել»¹⁰), բ) փխբ. «այդ յարմարանքի վրայ տարածուած խաղողի վազը»¹¹:

Կարելի է ենթադրել, որ քառմա բառի նախնական իմաստն էր ընդհանրապէս «շիւ, ընծիւղ», ժամանակի ընթացքում բառիմաստի սահմանափակման հետեւանքով այն սկսել է նշանակել միայն «խաղողի վազ» (տես՝ փխբ. «այդ յարմարանքի վրայ տարածուած խաղողի վազը»), այնուհետեւ՝ միայն «սարփիմայի վրայ տարածուած խաղողի վազ» եւ, ի վերջոյ՝ «սարփիմայ, որի վրայ ձգուում, տարածուում է խաղողի վազը»: Ճիշտ նոյն երեւոյթը հա-

10 FRIEDRICH, J., *Uethittisches Vorrterbuch*, Ueidelbeig, 1952-1954, 1, Ergänzung, 1957, 40.

11 Ա.ՂԱՅԵԱՆ, Է., *Արդի հայերէնի բացատրական բառարան*, Երեւան 1976, 419, ինչպէս նաեւ ԱՌԱՔԵԼԵԱՆ, Վ., *Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան*, հտ. Բ., Երեւան 1972, 143:

յերէնում կատարուել է, օրինակ, դեղ բառի հետ, որ նախապէս նշանակում էր «բոյս ընդհանրապէս», այնուհետեւ, իմաստի սահմանափակման հետեւանքով, եւ քանի որ բոյսերն օգտագործւում էին որպէս բուժամիջոցներ, սկսել է նշանակել «միայն բուժիչ բոյսեր» եւ, վերջապէս, իմաստափոխութեան հետեւանքով՝ «բուժիչ միւսեր»¹²։ Մէկ այլ օրինակ. ֆրանսերէն bureau «բիւրոյ» (սեղան) բառը նախապէս նշանակել է «շոր ուղտի բրդից» (bure), յետոյ՝ «սեղան, որ ծածկւում էր այդ շորով», այնուհետեւ ընդհանրապէս ամէն մի գրասեղան եւ, վերջապէս, այն սենեակը, որտեղ դրուած էր այդպիսի գրասեղան¹³։

Այսպէս, կարելի է հիմնաւորուած համարել ռապ. tama «ընծիւղ» - հայ. քառւա (ընդհանրապէս «վազ, միւղ, քուփ, ընծիւղ» նախնական իմաստով) համապատասխանութիւնը (այդ առումով հմտ. նաեւ լատիներէն termes «հատուած միւղ» բառը)։

Ռապանուերէն tama-ի երկրորդ՝ «երեխայ» իմաստն ապացուցում է «միւղ»-ի եւ «երեխա»-յի նոյնացուած ընկալումը (դարձեալ յիշեցնենք, որ ծննդաբանականի մէջ երեխաները ճիւղեր էին համարւում)։ Ունենք նաեւ hakatama (haka-tama) բառ՝ «ծնկ երեխաներ» իմաստով։ Այն բաղադրեալ կազմութիւն է, որի haka բաղադրիչը բայակերտ նախադրութիւն է՝ «անել, կատարել» իմաստով (հայերէն համարժէքն է՝ յանկ/յանգ «կատարել, աւարտել, կատարած» բառը)։ Ուրեմն՝ haka-tama բառացի նշանակում է «անել (իմա՝ ծնել) երեխաներ»։

Այս վերջին՝ «երեխայ» իմաստով tama բառը նոյնանում է բնիկ հայերէն գարմ բառին՝ առաջին բաց վանկից յետոյ ր ածականի յաւելման եւ ռապանուերէն-հայերէն բառային ընդհանրութիւններին բնորոշ տ>զ անցումով (օրինակ, ռապ. te «գոյականի հոգը» - հայ. գ նախդիր, ռապ. tarotaro₁ (taro-taro) «մախատել, հայհոյել, յանդիմանել, կշտամբել» - հայ. զայրանալ)։

Յայտնի է, որ զարմ բառը հայերէնում նշանակում է ե՛ւ 1) «ծառանգ, որեւէ ցեղի պատկանող անհատ», ե՛ւ 2) «տոհմ»։ Ռապանուերէնում եւս tama նշանակում է «երեխայ», ինչը համեմատելի է հայ. գարմ «ծառանգ, որեւէ ցեղի պատկանող անհատ» բառի հետ, tama բառը՝ «մարդկանց խումբ», որ համապատասխանում է հայ. գարմ «տոհմ» բառին, իսկ tama iti նշանակում է «երեխայ,

12 ԱՐԲԱՀԱՄԵԱՆ, Ս., Հայոց լեզու. քառ եւ յօսւք, Երեւան 1978, 75:

13 ՂԱՓԱՆՑԵԱՆ, Գ., Ընդհանուր լեզուաբանութիւն, Երեւան 1939, 325:

ազգական» (Հայերէն համարժէքն է զարմիկ բառը, որի մասին առաւել մանրամասն՝ ստորեւ):

Այսպէս՝ ռապանուերէն *tamaaroa (tama aroa)*, *tama roa*՝ «արական, տղայ, արու» բառակապակցութիւնները Հայերէն բառացի կլիներն՝ զարմայր (այսինքն՝ տղայ ժառանգ), իսկ *tamahahine (tama hahine)*, *tama a-hine*՝ «իգական, աղջիկ, մարի, էգ» բառակապակցութիւնները՝ զարմկին (այսինքն՝ աղջիկ ժառանգ):

Արդիւնքում ռապանուերէն (իմա՝ վաղնջահայերէն) *tama* արմատի հետ նոյն ծագումնաբանական փնջի մէջ են յայտնուում ոչ միայն վերոյիշեալ բառերը, այլեւ

ա) բնիկ Հայերէն մատաղ (հակադարձ ընթերցմամբ) «երախայ, մանկիկ», «մատղաշ, փափուկ, դեռատի, մանկահասակ» բառը: Այդ են ապացուցում ռապ. *mata* «կանաչ, չհասունացած, խակ» (ՆԱՆ **ma(n)tag*, ՆՊՆ **mata*, ռապ. *mata*, տոնգա *mafa*, մարկիզ. *maa*, թաիթ. *mata*, հաւայ. *maka*, մաորի *mata*, մանգ. *mata*, տուամ. *mata*) - Հայերէն մատաղ «մատղաշ, նորածին» բառերը: Այդ դիւրին ապացուցւում է նաեւ ռապանուերէն *mata*₂ «ցեղ, համայնք», *mata mua* «հին ցեղեր» (տես՝ զարմ «տոհմ»), *mata*₃ 1) «կանաչ», 2) «չհասունացած, դեռահաս», *mata*₄, *mata puku* «պտուղ, սաղմ», *matamata*₂ «լինել չհասունացած», *matahi* «տարիք», «սերունդ» բառերի միջոցով, որոնցից վերջին չորսի համարժէքը վերոյիշեալ մատաղ «մատղաշ, դեռատի, մանկահասակ», «երախայ, մանկիկ» բառն է (հմմտ. նաեւ ՆԱՆ **ma(n)tag* - հայ. մատաղ բառերը):

բ) բնիկ Հայերէն սերմն «բոյսի կամ կենդանական սերմ, ցեղ, սերունդ» բառը (նկատենք, որ Պատրուբանին Հայերէնից փոխառեալ է համարում հունգարերէն *szárm-azik* «արտադրուիլ, յառաջգնալ» բառը¹⁴):

գ) բնիկ Հայերէն թարմ «թաժա, թազէ, նոր» բառը (ռապ. *tama* (առաջին բաց վանկից յետոյ ր ածականի յաւելման յայտնի օրինաչափութեամբ) > *tarm(a)* (վերջնահնչիւնի օրինաչափ անկումով) > *tarm*), խուլ պայթականի յետագայ շնչեղացմամբ՝ *t'arm* (թարմ)¹⁵: Ասուածը հիմնաւորում ենք նաեւ վերջինիս հետեւեալ տարալեզու զուգահեռների արտայայտած իմաստներով. սանսկ. *taruna* «երիտասարդ, մատաղատի, մանկամարդ կիմ կամ աղջիկ»,

14 ԱՃԱՌԵԱՆ, Հ., Հայերէն արմատական բառարան, (այսուհետ՝ ՀԱԲ), Դ., Երեւան, 206:

15 ՀԱԲ, Բ., 161:

զնդ. tauruga «մարդոց եւ անասունների փոքրը, տղայ, աղջիկ», պրս. tar «թաց, թարմ», tarāna «գեղեցիկ երիտասարդ», օսս. tārin «տղայ, մանչ»: Աճառեանի կարծիքով՝ պատահական նմանութիւն ունի արաբերէն ٿارٿ «թարմ» բառի հետ:

ՊԱՊ ԵՒ ՏԱՏ

Ռապանուերէնում «պապ» իմաստն արտայայտւում է tapuna (ta-puna), tupuna (tu-puna), *tupuna tama roa*, իսկ «տատ»ը՝ նոյն tapuna (ta-puna), tupuna tu-puna), *ինչպէս նաեւ tupuna tama ahine* բառերով եւ բառակապակցութիւններով: Վերջիններիս *tama roa* եւ *tama ahine* բաղադրիչների մասին խօսուեց վերը, իսկ tapuna/tupuna բաղադրիչը նշանակում է «նախնիներ». նԱ.ն *tumpu, նՊ.ն *tupuna, ռապ. tapuna, tupuna, տոնգա tupunga «ծագում», սամոա tupuga, թաիթ. tupuna, հաւայ. kupuna, մաորի tupuna, մանգ. tupuna, տուամ. tupuna:

Մեր կարծիքով, այն կարելի է ստուգաբանել որպէս ta-puna, tu-puna կազմութիւն, որի ընդգծուած puna արմատն իր «նախնիներ» իմաստով ճշտիւ համապատասխանում է հայերէն բուն, բրբ. (Ղըջղ) պուն «ծառի իրանը, այն է արմատից վեր՝ մինչեւ ցիւղերի բաժանմամբ ընդած մասը» բառին¹⁶, որով, *ինչպէս նշեցինք, ծննդաբանականի մէջ նշւում է ուղիղ վերելքի (վայրէջքի) գիծը: Աւելորդ չենք համարում ընդգծել, որ tapuna (ta-puna), tupuna (tu-puna) բառերը -վերոյիշեալ իմաստներից բացի նշանակում են նաեւ «պապի (տատի) եղբայր», իսկ առանձին puna արմատը՝ «սկիզբ տուող, սկզբնաղբիւր» (հմտ. տոնգա լեզուի tupunga «ծագում» բառը), ինչը (նաեւ բառի «նախնի» իմաստը) կասկած չեն թողնում, որ գործ ունենք ծննդաբանականի «բուն» հասկացութեան հետ:*

Ինչ վերաբերում է ta- եւ tu- մասնիկներին¹⁷, աւելի ճիշտ՝ բառերին, դրանք նախադրութիւններ են, որոնց գուգահեռը հայերէնի գ- նախդիրն է: Ռապանուերէն ta եւ tu բառերը համարեա նոյնիմաստ են. ta նշանակում է «մասին, -ից, վերաբերեալ», tu «մասին, -ից»: Որպէս ձայնդարձային տարբերակ վերջիններիս ա-

¹⁶ ՀԱԲ, Ա., 483: Աճառեանն այն փոխառութիւն է համարում պիլ. Պագեմդ. bun «հիմ, արմատ, ծագում, բուն, սկիզբ, ծայր, հիմնական» բառից:

¹⁷ «Մասնիկներ» բառն այստեղ եւ այլուր գործածում ենք պայմանականօրէն, որովհետեւ ռապանուերէնում դրանք բառիմաստ եւ անկախ գործածութիւն ունեցող բառեր են դեռեւս:

ւելացնում ենք նաեւ թէ՛ն, որ գոյականի յօդն է: Իմաստների այս համախումբը հայերէնում արտայայտւում է գ- նախդրի միջոցով. որոշեալ ուղիղ խնդիրը գ- նախդիր է պահանջում, մի քանի ասացական բայերի վերաբերութեան խնդիրը («մասին» կապի իմաստով) գ-ով բացառականն է, իսկ կախման, կառչման իմաստ արտայայտող որոշ բայեր գ- նախդիրով բացառական խնդիր են առնում (իհարկէ, անիմաստ է խօսել ռապանուերէնի հոլովների մասին, քանի որ ակնյայտ է, որ խօսքը լեզուի (մեր կարծիքով՝ հայերէն լեզուի) այնպիսի խորագոյն հնութեան շրջանի մասին է, երբ նախադրութիւնները դեռեւս չեն զրկուել իրենց նախնական բառիմաստից եւ վերածուել նախդիրների):

Այսպէս, ռապանուերէն *tu-puna tama roa* «պապ» հասկացութեան հայերէն բառացի զուգահեռն է զբուն գարմ այր արտայայտութիւնը, իսկ *tu-puna tama ahine* «տատ» հասկացութեանը՝ զբուն գարմ կիմը:

Հետաքրքիր է նկատել, որ զբուն նշանակում է «բուն քանակը կամ քանակատեղին (համեմատութեամբ թւերի)», այլ կերպ ասած՝ բանակի կեմտրոնական մասը, ճիշտ այնպէս, ինչպէս ծնընդաբանականի մէջ բունն է գտնւում կեմտրոնում՝ ճիւղերի համեմատութեամբ (նաեւ «մէկի կամ մի քանի ծագումը, մախապատեառը, սկիզբը»), իսկ բուն կանգնել՝ «որսալու մի ձեւ է, ...երէնների խրտնեցնում էին եւ բշում դէպի կեմտրոնը»¹⁸:

ՅՂԻ ԵՆ ՅՂԻՈՒԹԻԻՆ

Այս իմաստները ռապանուերէնում արտայայտւում են *tupu* բառով եւ *anau tama*, *hanau tama*, *anau tama vie* արտայայտութիւններով: Նախ անդրադառնանք դրանցից առաջինին, որն ունի հետեւեալ իմաստները. *tupu*₁ 1) «յղիամալ», 2) «ծնել», 3) «սաղմ», «յղի», *tupu*₂ «ծառ, ընձիւղ, շիւ» (մարդ-ծառ նոյնացման եւս մէկ վկայութիւն), նաեւ «աճել» (ՆԱՆ **tubug*, ՆՊՆ **tupu*, ռապ. *tupu*, տոնգա *tupu*, սամոա *tupu*, մարկիզ. *tupu*, թաիթ. *tupu*, հաւայ. *kupu*, մաորի *tupu*, մանգ. *tupu*, տուամ. *kupu*): Վերջիններիս բացարձակ համարժէքը բնիկ հայերէն թուփ (բխեցւում է հնիւ. **tupho-dēl-ig*) «կարմ, ցած ծառ», «թաւ ոստ, տերեւալից միւղ» բառն է (հմտ. հայերէն բրբ. (Ղրբղ) քափ (տալ) «աճել», «մեծանալ, հասակ առնել» արտայայտութիւնը):

Ըստ ամենայնի՝ այս արմատի ձայնդարձային տարբերակ պէտք է համարել *topa* բազմանշանակ արմատը. *topa* «կաթել», «իջնել», *topa iho* «ընկնել», որի հետ նոյնանում է հայերէն բրբ., նաեւ մանկական լեզուի թո՛մփի (անել) «ընկնել» բառը: Այն առկայ է նաեւ *topaga* (*topa-ga*) «երեխայի ծննդեան օրը» բառում (յատկանշական է, որ հայերէնում նոյնպէս ունենք յատուկ բառ՝ տղաբու՛մ «որդու ծննդեան տօնը»¹⁹ իմաստով):

Իջնել/կաթել/ընկնելու եւ ծնուելու իմաստային առնչակցութիւնն է արտացոլուած նոյն արմատի *topa* «ծնուել, ծին» եւ *topa nihi* «ընկնել գլխով դեպի ներքեւ» տարբերակներում: Վերջինիս հայերէն համարժէքներ կարելի է համարել չստուգաբանուած թօպ «վտիտ, տկար (պտուղների համար ասուած)», տոմփ «ցեղ, տոհմ», որից ունենք տոմփական «ցեղակից, միացներ»²⁰ (հմմտ. նԱ.ն *tumpu «նախնիներ» բառը):

Իսկ այժմ *anau tama*, *hanau tama* «հղիութիւն» եւ *anau tama vie* «յղի կիմ» արտայայտութիւնների մասին: Ռապանուերէն *anau/hanau* բառի հետ բացարձակ նոյնական են բնիկ հայերէն համ, հանի «մեծ մայր», «մայր հօրն կամ մօր» բառերը, որոնք բխեցւում են հնիւ. ժամանակի մանկական լեզուի բնաձայն բառ համարուող *an-* «հօր կամ մօր մայր, մամ, տատ» ձեւից: Ռապանուերէն *anau*, *hanau* «ծնել, ծննդաբերել» (=հայ. համ/հանի «մայր հօրն կամ մօր») բառերի հետ համադրելի են նաեւ խեթ. *hannaš*, *hanni* «տատ», լիկ. *xñna*, պալ. *anna-*, լուվ. *anni-*, լիկ. *ēni*, լիդ. *ēna*, իլիր. *anā*, *annā*, իլիր. *anā*, *annā*, հայ. բրբ. (Կոտայք) *անա* (*ana*) «մայր», հուն. *αννίς*, լատ. *anus* «պառաւ կիմ», հին գերմ. *ana* «տատ», հբգ. *Ano* «մեծ հայր, պապ», հպրուս. *ane* «մամ, մեծ մայր», աֆղան. *Ana* «մեծ մայր», լիտվ. *Anýta* «ամուսնու մայրը», կամիս. *hannui* «տատ, մեծ մայր» բառերը եւ այլն:

Ինչպէս ցոյց են տալիս ռապանուերէնի փաստերը, բոլոր այս բառերի ծագումը եւ նախնական իմաստը կապուած են եղել հայերէնում անյայտ ծագման համարուող եւ այլեւս առանձին անգործածական համ«հանել, յափշտակել» բառի հետ: Ամենայն հաւանականութեամբ, այս բառերի ելակէտային իմաստն էր համ «հանել» (փխբ.՝ «ծնել»), որից էլ հանող «ծնող»: Բերենք մեր կարծիքը հաստատող օրինակներ. ռապ. *anui* «պակասորդ», *hanao* «հանել (ցանցից, կողովից)», *hanohano* (*hano-hano*) «սրտխառնց», ո-

19 ՀԱԲ, Դ., 412:

20 Անդ, 420:

ըոնք նոյնական են հայերէն համ «հանել, յափշտակել», հանումն «հանելն, ելք» բառերին (հմտ. նաեւ խեթ. hān-/han- «հանել (հեղուկներ)», սանսկ. हान[hāna] «ամենտացում», हानी[hāni] «վնաս, նուազում», ֆինն. hankkia, էստ. hankima «արդիւնահանել, ձեռք բերել» բառերը): Նոյն հան «հանել» արմատով կազմուած հայերէն հանեալ «արձակուած կիմ» բառն այս (ծնել, ծննդաբերել) իմաստով համեմատելի է թւում ազատուել «ծննդաբերել» (ազատ=արձակ) բառի հետ:

Այսպիսով, ռապանուերէն վերոյիշեալ արտայայտութիւնների հայերէն բառացի զուգահեռներն են՝ anau tama/hanautama=հան(ել) գարմ (=յղիութիւն), իսկ anau tama vie = հան(ող) գարմ կիմ «սերունդ հանող կիմ» (=յղի կին):

Աւելացնենք, որ ռապանուերէն anau/hanau բառերը ունեն նաեւ «ցեղ, ժողովուրդ» իմաստ. օրինակ՝ hanau eere «թանձրամարմինների/գերերի ցեղ», hanau momoko «միհարների/բարակների ցեղ»: Յիշեցնենք, որ բնիկ հայերէն հանի բառը հնում ունեցել է «նախնի» իմաստ, որ պահպանուել է վրացերէնում հայերէնից փոխառուած հանի «նախնի» բառի մէջ²¹:

ԵՐԵՆԱՅ

Այս իմաստն է արտայայտում վերոյիշեալ tama բառով կազմուած tama iti բառակապակցութիւնը, որի iti «փոքրիկ» բաղադրիչը ընդհանրական է բոլոր պոլինեզական լեզուների համար. ՆԱՆ *itik, ՆՊՆ *iti, ռապանուերէն iti, սամոա iti, թաիթերէն iti, հալայերէն iki, մաորի iti, մանգարեալ iti, տուամոտու iti այս բոլորը «փոքրիկ» իմաստով: Յիշեցնենք, որ պոլինեզական լեզուներում գործում է t||k համապատասխանութիւն (Tu||Ku, tapa||kapa, tapu||kapu, atua||akua, Tangaloa||Kanaloa, Tahiti||Kahiki): Մասնաւորապէս, Հալայեան կղզիների լեզւում t-ն բոլոր դիրքերում վերածուել է k-ի եւ iti-ն այնտեղ հնչում է iki, որի վերջնահնչիւնի կանոնաւոր անկումով ստանում ենք ik, ինչն էլ իր հերթին նոյնանում է հայերէնի իկ նուազական/փաղաքշական մասնիկին²²:

21 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., *Ջրայցներ հայոց լեզուի մասին*, Երեւան 1992, 49:

22 Յիշեցնեմք, որ իրանական ծագման համարուող -իկ փաղաքշական-նուազական մասնիկից բացի հայերէնում ունի ցեղանունակերտ -իկ մասնիկ եւս (որից՝ տանիկ, պարսիկ, խափշիկ, հնդիկ, խուժիկ եւ այլն): Սրան այլ լեզուներում փոխարինում է -իտ մասնիկը (խուրիտ, հեթիտ, սեմիտ, բուշիտ, էլամիտ եւ այլն), որին խուրիական ծագում է վերագր-

Ասորաժն առաւել համոզիչ դարձնելու նպատակով տեղին ենք համարում նշել նաեւ ռապ. riki «փոքրիկ» (նԱՆ *Dikig, նՊՆ *riki, ռապ. riki, rii, տոնգա si'i, սամոա li'i²³, մաորի riki, մանգ. rikiriki, տուամ. riki) = հայերէն -րիկ (ման-րիկ, փոք-րիկ) «նուազական մասնիկ» ակնյայտ նոյնութեան մասին²⁴:

Նշեալ համապատասխանութիւնների արդիւնքում օրինա-չափօրէն ստանում ենք հետեւեալ զարգացումները. *tama iti(t|k)/tama iki* (ը աճականի օրինաչափ յաւելումով) > *tarm(a)-ik(i)*, երկու բառերի վերջնահնչիւնների կանոնաւոր անկումով > *tarm-ik*, վերոյիշեալ տ>զ անցումով՝ բնիկ հայերէն զարմիկ բառը²⁵:

Վերոյիշեալ *tama iti/tama iki* «փոքրիկ» (=հայ. զարմիկ) բառից բացի այս իմաստն է արտայայտում նաեւ ռապանուերէն *poki* «ե-րեխայ» բառը: Այս բառի հայերէն համարժէքը փոքր բառն է, որի գրաբարեան սեռականի ձեւը, ինչն ընդունուած է համարել բառի ուղիղ ձեւ, փոքու է: Վերջինիս ճշգրիտ համապատաս-խանում են նաեւ ռապանուերէն *potu₂* «փոքր եղբոր երեխաներ» (տես՝ t|k համապատասխանութիւնը) եւ *puku* (գտնում ենք *mata puku* «պտուղ, սաղմ» արտայայտութեան մէջ) բառերը:

Այս (*poki*) բառի զուգահեռները յաջողում է գտնել նաեւ այնպիսի հնդեւրոպական լեզուներում, ինչպիսիք են իսլ. *fækka* «նուազել» (իմա՝ «փոքրանալ»), լատ. *paucus* «փոքր», հ.բ.գ. *fōh* «փոքր» (հմտ. հնդեւրոպական **pou-ko-* «փոքր»²⁶): Փոքր բառի հնութեան մասին է վկայում այն փաստը, որ այն զուգահեռներ Ունի նաեւ նոստրատիկ ընդհանրութեան տիրոյթում՝ Ֆիննա-ուգրական լեզուաընտանիքում. Ֆինն. *pikku* «փոքր», էրզյա *pyöppö*

ւում: Կարծում եմ, ռապանուերէն *iti* – հաւայերէն *iki* զուգահեռը կա-րող է դիտուել որպէս -իտ/-իկ մասնիկների նոյնաձայն (նաեւ բնիկ հայերէն) լինելու ապացոյց:

23 Տես՝ հայերէն նոյնիմաստ -լիկ (նեղիկ, չաղիկ, պստիկ, հաստիկ) վեր-ջածանցը:

24 Որ յիշեալ բառերում գործ ունենք ոչ թէ -իկ, այլ -րիկ վերջածանցի հետ, հիմնաւորում եմ տպագրութեան պատրաստուող «Հայ-պոլիսեզեան լեզուական առնչութիւններ» գրքում:

25 Հ. Աճառեանը գտնում է, որ զարմը կազմուած է բնիկ հայերէն արմ-, արմն- «արմատ» բառից զ նախդիրով եւ նշանակում է «ցեղ, սերունդ»: ՀԱԲ, Ա., 327:

26 ДЖАУКЯН, Г., *Очерки по истории письменного периода армянского языка*, Ереван 1967, 105.

«մանր», ուղմ. пичи «փոքր» (=հայերէն բրբ. «պիծի»), մար. Пы-
чирик «փիչ» (=հայերէն «պուճուրիկ»), հունգ. pici «շատ փոքր»
(=հայերէն բրբ. «պիծի»), fogyni «նուազել», fogyó «նուազող»²⁷:

Կարծում ենք՝ ռապանուերէն poki «երեխայ» բառի հետ հա-
մեմատելի են նաեւ ֆինն. poika «որդի», կարելիքէն poiga «թռչնի
նուտ» բառերը:

Նոյնիմաստ բառ է նաեւ hahaki, բառը, որ նշանակում է 1) «որդի», «եղբայր» եւ 2) «երեխաներ»: Ընդգծուած վերջին իմաս-
տով այն նոյնանում է հայերէնի հնատիպ բարբառներից մէկի՝
Ղարաբաղի բարբառի խօսեմ «երեխաներ» բառի հետ: Ըստ ամե-
նայնի, բառի նախնական արմատն է hahā, իսկ ki բաղադրիչը հա-
մապատասխանում է գրաբարեան -f յոգնակիակերտին (hahā=խաւ-
խա/խօխա²⁸, hahā-ki=խաւխայ-ք/խօխե-ք): Ի դէպ, նոյնպիսի կազ-
մութիւն ենք ենթադրում նաեւ ռապանուերէն ariki (ari-ki)²⁹ («ա-
ռաջնորդների եւ երեւելիների դասային-կաստայականիւմը Զատկի
կղզում եւ Պոլինեզիայի մնացած կղզիներում, որ հասարակակա-
նայ խմբերի համեմատութեամբ օգտւում էր լայն արտօնութիւններից
եւ համարեաւ աստուածացւում տեղաբնիկների կողմից»³⁰) բառի հա-
մար, որի տառացի հայերէն զուգահեռը արիֆ (արի-f) բառն է:

Առաւել հետաքրքիր է մէկ այլ նոյնիմաստ բառ՝ raga, որն
ունի իմաստային որոշակի սահմանափակում. նշանակում է «երե-
խայ, որ ծնունդ է այն ժամանակ, երբ ծնողները փրկւում էին փա-
խուստի դիմելով»: Ռապանուերէն այս բառը հայերէնում ունի մի
քանի զուգահեռներ.

27 ՆԻԿՈՂՈՍԵԱՆ, Գ., Հայ-ֆիննաուգրականլեզուականառնչութիւններ, Երե-
ւան 2011 (թեկնածուականատեմախօսութիւն):

28 Ssu՝ռապանուերեմհukihuki₂ (huki-huki) «խոցել, ծակծկել» -
հայերեմխողխողումմ «սպանումխողխողմամբարդ», hirohiro (hiro-hiro)
«խառնել, լուծել» - հայ. խառնել (խառն) «խառնել», hava «խաւար» -
հայ. խաւ «արմատիւաւարի», hatuhatu (hatu-hatu) «խեղաթիւրել» -հայ. խա-
թարեմ «աւերել, եղծանել», haro «բարձրացնելխարիսխը» - հայ. խարիսխ
«խարիսխ», harai «սխալ, սխալուել» - հայ. խալտիմ «սխալիլ», harei
«տուն, խրճիթ» - հայ. խուղ «խրճիթ» կայլմ:

29 Մասնագիտական գրականութեամ մէջ այն ստուգաբանում է որպէս a-
riki կազմութիւն, որի riki բաղադրիչը նշանակում է «փոքր» եւ իմաստա-
յին առումով շփման ոչ մի եզր չունի նոյն արմատի arii տարբերակի
հետ:

30 СТИНГЛ, М., Последний рай, Москва 1975, 445.

ա) բրբ. (Ղարաբաղ) րախա/րեխա «երեխայ», (այլ բարբառային տարբերակներից են *րէխա*, *ըրախա*, *էրէխա*, *յէրէխա*, *ըրէխա*, *արախա*, *էրխա*, *ըրխա*, *ըրխօ*)³¹, և նախահնչիւնի յաւելումով՝ *արդի հայերէն* երախայ/երեխայ «տղայն որ ածին՝ կաթնակեր, որ չունի րեքան խօսելոյ»³²: Նկատենք, որ Աճառեանը ենթադրում էր, որ գոյութիւն է ունեցել ասորական ինչ-որ *raxa ձեւ, որից էլ նա փոխառեալ է համարում մի կողմից հայերէն երախայ եւ միւս կողմից՝ պահլաւական raxik ձեւերը³³:

բ) կովկասեան լեզուներից փոխառեալ համարուող լակոտ-«շանձագ» բառի լակ արմատը³⁴ (բարբառային տարբերակներից են՝ *լակօտ*, *լագոդ*, *լագօդ*, *լակոտ*, *լագէօ*, *լագէօդ* եւ այլն), իսկ այլալեզու զուգահեռներից՝ *լագ*. *լակի*, *լաքի*, *լաճի* «շուն», *վրաց*. *լեկուլի* «շան լակոտ, առիւծի կորիւն»): Յատկանշական է, որ, ինչպէս նշում է Աճառեանը, «հայերէնը փոխառեալ համարելու պատճառն այն է, որ արմատը լակ՝ գտնւում է միայն կովկասեաններում»³⁵:

գ) անյայտ ծագման համարուող լան «ուստր, մանչ, տղայ» բառը, որի հնութեան վկայութիւն կարելի է համարել նրա տարածուածութիւնը չրջակայ ամենատարբեր լեզուների մէջ. տես, օրինակ, իմերել. *լա՛ճի* «մանչ, տղայ», քրդ. *laş*, զազա *laş*, ղուժիկի *laşik*, մանաւանդ եթովպական ամհարիկ լեզուով՝ *ləj* «որդի», անգլ. *lad* «մանչ, տղայ»³⁶:

Նոյն՝ «երեխայ» իմաստն է արտայայտում նաեւ ռապանուերէն *hagu*, «կրտսեր որդի», «պստիկ, փսլմֆոտ» բառը: Վերջինիս բնիկ հայերէն համարժէքն է ձագ «հաւի, թռչունի կամ չորֆոտանու ձագ» բառը (բխեցւում է հնիս. *ghag²h*-«ձագ, յատկապէս թռչունի ձագ» ձեւից, որի զուգահեռներից են սոգդ. *zāk* «տղայ,

31 ԽԱՉԱՏՐԵԱՆ, Հ., Ազգակցական յարաբերութիւններ արտայայտող բառերը հայերէնի բարբառներում, Երեւան 2009, 52-56:

32 ՆՀԲ, Ա., 666:

33 ՀԱԲ, Բ., 35:

34 Պոլիմեզական լեզուներին եւ ռապանուերէն-հայերէն բառային ընդհանրութիւններին քննարկելու հերթագայութեամբ: ՍՏԵՓԱՆԵԱՆ, Լ., Պոլիմեզացիների մատչելիութեան ըստ տեղամուկների, Ի Բազմալեզ, 2011, 1-2, 308-328:

35 ՀԱԲ, Բ., 261:

36 Անդ:

սերունդ», արաբ. zāg «ձագ», ասոր. zāga «հաւի ձագ», վրաց. զաքի «ձագ, յատկապէս գոմէշի ձագ», ալբան. zok, zogu, zogne «թռչունի ձագ» եւ այլն): Նոյն հաց արմատով կազմուած հացu potu «երեխայ» բառակապակցութիւնը հայերէն բառացի կը լինի՝ ձագ փոքր:

Կարծում ենք, նոյնիմաստ բառ կարելի է համարել ռապանուերէն *manu* բառը եւս, որով անուանում են «մարդու գրոտեւ-ֆային փոքրիկ արձանիկը»: Այն նոյնանում է հնիւ. *manu-* «փոքր, մանր» բառի հետ (հմտ. Նաեւ հնդեւրոպական **manu-s* «այր, տղամարդ» բառը³⁷): Վերջինիս բնիկ հայերէն զուգահեռներ ենք դիտում. ա) մանուկ 1) «երախայ», 2) «պատանի», 3) «փոքր, մանկահասակ»³⁸, բ) մանչ «արու տղայ», «տղայ երեխայ», որ, ըստ Աճառեանի, «ուրիշ լեզուի մէջ չի գտնուում»³⁹, հնից անհնդուած է մանչուկ, մանչոն «մանկիկ» ձեւերով:

«Մանկիկ, պստիկ մանուկ» իմաստ ունեցող ռապանուերէն *goigoi*, *gorigori* (*gori-gori*) բառի *gori* արմատը նոյնական է հայերէն գոռ- արմատին, որից՝ գոռոչ «ըղաւոց, բարձր ձայն», գոռոչել «գոռալ, գոչել»:

ՏՂԱՅ

Տղայ իմաստն արտայայտուում է *poki tamaaroa* եւ *tama aroa/tama roa* արտայայտութիւններով, որոնց հայերէն բառացի համար-ժէքներն են՝ փոքր զարմ այր եւ զարմ այր արտայայտութիւնները:

«Պատանի, երիտասարդ մարդ» իմաստն ունի ռապանուերէն *taga* բառը, որի բնիկ հայերէն զուգահեռն է տագր/տայգր «ամուսնու եղբայրը» (բխեցւում է հնդեւրոպական **daiver* կամ **t'aiuēr* ձեւից), նաեւ հայերէնում փոխառութիւն համարուող տղայ «պատանեակ, տղայ», «մատաղատի» բառերը⁴⁰: Ըստ Հիւբշմանի՝ տայգր ձեւն աւելի հին է, քան տագրը⁴¹: Մեր կարծիքով՝ հակառակը, քանի որ, պարզւում է, որ ր անականը ռապ.-հայերէն բառային

37 ՋԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հայոց լեզուի պատմութիւն. միջազգային ժամանակաշրջան, Երևան 1987, 287:

38 Պոլինեզերէն *manuka* – հայերէն մանուկ զուգահեռի մասին տես՝ ՍՏԵՓԱՆԵԱՆ Լ., Հայկական (հնդեւրոպական) ենթաշերտ պոլինեզական լեզուներում, Երևան 2001, 54-55:

39 ՀԱՐ, Գ., 256:

40 Հիմնաւորումը՝ հրատարակութեան պատրաստուող «Հայ-պոլինեզեան լեզուական առնչութիւններ» գրքում:

41 ՀԱՐ, Դ., 356:

ընդհանրութիւններում աւելանում է ոչ միայն առաջին բաց վանկից յետոյ (օրինակ, ռապ. Poki «Երեխայ» - հայ. փոքր, ռապ. take «արմատ» - հայ. բրբ. տակոն «արմատ», ռապ. akau «լինդ» - հայ. ակոայ «ատամ»), ինչի արդիւնքում անմիջականօրէն ստանում ենք՝ ռապ. taga «պատանի, երիտասարդ» - հայ. տագր «ամուսնու եղբայրը» տարբերակը:

ԱՂՋԻԿ

Աղջիկ իմաստը ռապանուերէնն արտայայտում է uha, uka, vovo⁴² բառերով, ինչպէս նաեւ poki tamaahine (poki tama-a-hine), poki tamahahine (poki tama-ha-hine) արտայայտութիւններով: Ակնյայտ է ռապանուերէն uha 1) «էգ», 2) (պտկ.) «կին», «դուստր, աղջիկ» բառի եւ ժամանակակից հայերէնի իգական սեռի ցուցիչ-ուհի ածանցի նոյնութիւնը: Այս ածանցը հայերէնում համարւում է իրանական փոխառութիւն⁴³:

Կարծում ենք, որ յաջորդ՝ uka «աղջիկ», «երիտասարդ կին» (uka hoa «ընկերուհի») բառը ռապանուերէն uha «կին» բառի հնչիւնափոխուած տարբերակն է (տես՝ h/k լծորդութիւնը ռապանուերէնում): Մեր ստացած տպաւորութեամբ՝ uka տարբերակը գործածւում է այն դէպքերում, երբ մասնաւորեցւում է, թէ յատկապէս ում աղջկայ մասին է խօսքը. օրինակ՝ uka a Ratoka նշանակում է «Ռատոկ(այ)ի աղջիկը»⁴⁴:

Նոյնիմաստ poki tamaahine (poki tama-a-hine) եւ poki tamahahine (poki tama-ha-hine) արտայայտութիւնների հայերէն բառացի համարժէքն է՝ փոքր զարմ կին:

ՀԱՅՐ ԵՒ ՄԱՅՐ

Հայր եւ մայր հասկացութիւնները պոլինեզական լեզուներում արտայայտւում են նոյն՝ matua/metua «հայր, մայր, ծնողներ» բառով, ի դէմս որի ճանաչելի է հնդեւրոպական *maHter- «մայր» արմատը (հմմտ. նաեւ թոխ. Ա mācar, թոխ. Բ mācer, հին հնդկ. mātár, աւեստ. mātar, հայ. mayr, հուն. μητηρ, լատ. mātar, հին իռլ. máthir, հին գերմ. Mouter (գերմ. Mutter), հին անգլ. mōdor (անգլ. mother), լատիշ. mate, պրուս. mūti, հին սլաւ. mati):

42 Համեմատելի է վրացերէն գոգոնա «աղջնակ» բառի հետ:

43 ՋԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հայոց լեզուի պատմութիւն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան 1987, 238, 356:

44 ФЕДОРОВА, И., Мифы и легенды острова Пасхи, Ленинград 1988, 94.

Հայր նշանակելիի համար վերոյիշեալ matua/metua բառերից բացի գործածուում են նաեւ koro բառը եւ մեզ արդէն ծանօթ-matua tama aroa, matua tama roa բառակապակցութիւնները: Ինչպէս արդէն ցոյց տրուեց, վերջիններիս համապատասխանում է հայերէն «ծնող զարմ(ի) այր» արտայայտութիւնը: Հետաքրքիր է նկատել, որ Նոր Հայկազեան բառարանը հայր բառանուանումը կապում է այր բառի հետ, որպէս «այր կամ արու ծնող զաւակի»⁴⁵:

ՈՐԲ ԵՆ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ

Որբ եւ ծնողագուրկ իմաստները ռապանուերէնն արտայայտուում է matua kore բառակապակցութեամբ, որտեղ matua նշանակում է «հայր, մայր, ծնողներ»: Ինչ վերաբերում է kore արմատին, այն շատ բազմիմաստ արմատ է, ինչպէս ի դէպ, ռապանուերէնի արմատների մեծ մասը, եւ ունի հետեւեալ իմաստներ. «չունեմալ», «չլինել», «պակասել», «բացակայել», «չհերիքել», «դատարկութիւն, ունայնութիւն», «դուրս», «անհասանելի», «ոչ», «ոչ-ոք», «ոչ մի ժամանակ (երբեք)», նաեւ՝ «գող»: Ինչպէս նկատում ենք, վերոյիշեալ բոլոր իմաստներն առնչւում են հայերէնում առանձին անգործածական կոր «կորչիլ, անհետանալ, փնանալ» «կորել» արմատին. Այսինքն՝ ռապ. kore - հայերէն կոր(ել) երկպլանային (ձեւաիմաստային) համընկնումը կասկած չի յարուցում:

Մեզ յաջողուել է նաեւ գտնել kore արմատով կազմուած բազմաթիւ հայեցի բառակապակցութիւններ, որոնց մէջ այն ունի «կորչել, չունեմալ» իմաստ. agu kore «մահ» = agu «շնչառութիւն, շունչ» (=հայերէն ոգի, հազազ) + kore «կորել», mauga kore «փոքրագոյն» = mauga «մեծութիւն» (=հայերէն՝ մեծ) + kore «կորել», gigio kore «մերկ» = gigio «ցնցոտի» (=հայերէն՝ ձորձ «զգեստ», որ Պեդերսենը բխեցնում է հնիս. *g'horg'h ձեւից⁴⁶) + kore «կորել», matua kore «որբ» = matua «ծնողներ, հայր, մայր» + kore «կորել» եւ այլն:

ԱՄՈՒՍԻՆ

Ամուսին հասկացութիւնն արտայայտուում է kenu բառով, որը համեմատելի է հնդեւրոպական *k^oen- «կիմ» բառի հետ: Մեր կարծիքով, այն ռապ. hine «կիմ» արմատի հնչիւնափոխուած տարբերակն է: Նման իմաստային անցում անշուշտ հնարաւոր

45 ՆՐՀ, 32:

46 ՀԱԲ, Գ., 158-159:

էր. յիշենք, որ ռապանուերէնում միեւնոյն *matua/metua* բառով անուանում են ե՛ւ հօրը, ե՛ւ մօրը, իսկ հնդեւրոպական առարմատն ունենր «արական կամ իգական սեռի մախմի», իմա՝ «թե՛ իգական, թե՛ արական սեռի մախմի» իմաստ:

Այս իմաստով տեղին ենք համարում նկատել, որ նոյն կերպ թէ՛ հին հայերէնը, թէ՛ արդէի գրական լեզուն այր եւ կիմ եզրերի համար ունեն ընդհանրացուած անուանում՝ ամուսիմ, որ սեռայիմ տարբերակում մախապէս չի ունեցել (նրանից բաղադրուած ձեւերը եւս վերաբերում են զոյգ եզրերին՝ ամուսմամալ, ամուսմութիւմ, ամուսիմներ) եւ երկար ժամանակ անց միայն վերածուել է այր եզրի բացարձակ անուանման: Հին հայերէնում առկայ են աղոտ սեռային տարբերակման նշոյլներ, իսկ ամուսիմ յարաբերութեան արական եզրը գրաբարում այր բառով է արտացոլուած⁴⁷:

ԱՅՐԻ

Այրի իմաստն ունի *hove* բառը, որ նշանակում է ե՛ւ «արամբի (առանց ամուսիմ կիմ)», ե՛ւ «կնամբի (առանց կիմ տղամարդ)», ինչը եւս վկայում է սեռային տարբերակման բացակայութեան մասին: Այն գտնում ենք հին հնդկ. *vidhāvā*, աւեստ. *vidavā*, գոթ. *widuwō*, հին անգլ. *widuwe* (անգլ. *widow*), հին բ. գերմ. *witwa* (գերմ. *Witwe*), պրուս. *widdewu*, հին սլաւ. *Vǐdova* նոյնանշանակ բառերի մէջ:

Այրի կիմ նշանակելիի համար վերոյիշեալ *hove* բառից բացի գործածւում է նաեւ *vie kenu kore* բառակապակցութիւնը, որտեղ *vie*=«կիմ», *kenu*=«ամուսիմ» + *kore* «կորել»:

ՈՐԴԻ

Ռապանուերէն *ure₂* «որդի»⁴⁸ բառի զուգահեռները հետեւեալ բնիկ հայերէն բառերն են.

ա) որձ «արու» (նկատենք, որ նոյն *ure₁* արմատը ռապանուերէնում ունի նաեւ «տղամարդու առնամդամ» իմաստ),

բ) որդի, բրբ. օրթի, օրդի, վոթի, վուրթի «սերունդ, զաւակ, մանաւանդ արու զաւակ, մանչ», նաեւ բրբ. ուրջու «խորթ որդի»,

47 ԽԱՉԱՏՐԵԱՆ, Հ., Ազգակցական յարաբերութիւններ արտայայտող բառերը հայերէնի քարքառներում, Երևան 2009, 144-145:

48 ФЕДОРОВА, И., Мифы и легенды острова Пасхи, Ленинград 1988, 244.

գ) առն, այր «տղամարդ»:

Սրանց կարելի է յաւելել եւ անյայտ ծագման համարուող որոշ «գառնուկ» բառը:

Ռապանուերէն *morore* «արտամուսնական գաւակ» բառի հայերէն ճշգրիտ համարժէքն է մաւրու (մօրու) «խորթ, անհարազատ մայր» բառը:

ՔՈՅՐ

Քոյր իմաստը ռապանուերէնում արտայայտուում է *taina*, *teina* բառերով: Պոլինեզական լեզուներին բնորոշ վերոյիշեալ *t|k* համապատասխանութեան սկզբունքով այն համեմատելի է դառնում հայերէն քեմի «կնոջ քոյրը» բառի հետ, իսկ մէկ այլ՝ *n/r* (*na/ra*, *no/ro*, *runu/ruruku*)⁴⁹ օրինաչափութեան արդիւնքում ստանում ենք բնիկ հայերէն քոյր/քոյր (քուր, քուոյր, քոյր, քիր, քիյ, քեր), սեռ.՝ քեռ.«քոյր» բառը:

ԱՆԵՐ

Ռապանուերէն *haana* «փեսայ, աներորդի, քեմակալ, տեգր» բառի հայերէն համարժէքն է աներ «կնոջ հայրը», «աներորդի, աներազ», «աներամբ, աներոջ տունը», բրբ. աներ, անիր, անէր, օնիր, հանէր (Գոր., Ղրբ., Շմ.) «կնոջ հայրը» բառը⁵⁰ (ոմանք կապում են հնիւ. *ano «պապ»ի հետ): Հայերէնի բարբառային որոշ տարբերակներ ռապանուերէնի պէս սկսւում են կոկորդայինով. հանէր, հանըր:

ՏԱԼ

Ռապանուերէն *tao* «ամուսնու քոյրը» բառը նոյնական է բնիկ հայերէն տալ «ամուսնու քոյրը» բառին: Աճառեանը ենթադրում է, որ «հնիւ. ց'ալժու- դարձած պիտի լինի մախ հայ. *ծալ, որ յետոյ տագր բառի ազդեցութեամբ՝ մախաձայն փոխելով եղաւ տալ»⁵¹:

49 ФЁДОРОВА, И., Некоторые черты развития рапануйского языка (на материале фольклорных текстов), в книге «О языках, фольклоре и литературе Океании», Москва 1978, 42.

50 ՀԱԲ, Ա., 192-193:

51 ՀԱԲ, Դ., 356:

Ռապանուերէնում առկայ են ազգակցական յարաբերութիւններ ցոյց տուող մի շարք բառեր, որոնք այլ պոլինեզական լեզուներում անմիջական զուգահեռներ չունեն։ Մասնագէտների կարծիքով, դրանք ոչ թէ օտարամուտ երեւոյթներ են, այլ ճիշտ հակառակը. ներկայացնում են համապոլինեզական բառապաշարի հնագոյն (արխաիկ) շերտը⁵²։ Այս իմաստով առաւել քան բնական է, որ այդ բառերը պահպանուած ենք գտնում ռապանուերէնում, այսինքն՝ այն լեզուում, որն առաւել հարազատօրէն է արտացոլում ոչ միայն նախապոլինեզական, այլեւ նախաաւստրոնեզական լեզուավիճակները։

Եւ այսպէս, որո՞նք են ռապանուերէնի ազգակցական եզրերի՝ համապոլինեզական բառապաշարի արխաիկ շերտին պատկանող բառերը եւ ունե՞ն արդեօք դրանք հայերէն զուգահեռներ։

1) Koro₂ արխ. «հայր» - բնիկ հայերէն հայր⁵³, սեռ.՝ հօր (հաւր>հօր), ինչպէս նաեւ հօրու (հաւրու) «ամհարազատ, խորթ հայր»։ Համեմատելի է նաեւ չստուգաբանուած հօր «մէկի աղջկայ ամուսինը, փեսայ» բառի հետ։

2) nua₁ արխ. «մայր» - հայերէն արխ. նու «մայր, հարս, տալ», թերեւս նաեւ՝ ներ «տագերակիմ, կամ ամուսնու միւս կիներ»։

3) vie «կիմ» - բնիկ հայերէն կիմ «կիմ»,

4) kenu «ամուսին» - բնիկ հայերէն կիմ «կիմ»։

5) kope «որդի», «երիտասարդ մարդ» - ա) թւում է նոյնիմաստ api «երիտասարդ մարդ» բառից k նախահնչիւնի յետագայ յաւելումով ստացուած բառ։ Վերջինս նոյնանում է բնիկ հայերէն ապի, ափու «հայր» բառի հետ, որ Գ. Զահուկեանը համարում է հայերէնի գրաւոր յուշարձաններում չվկայուած, սակայն բարբառներում պահպանուած հնդեւրոպական արմատական - ձեւ⁵⁴։

բ) ռապանուերէն-հայերէն բառային ընդհանրութիւններին բնորոշ է p|t համապատասխանութիւն (ռապ. Kutu «կաչող» - հայերէն կիպ «կպած, յարած», ռապ. mataku (ma-taku) «վախ, սարսափ»

52 ФЁДОРОВА, И., *Мифы и легенды острова Пасхи*, Ленинград 1988, 245.

53 Sbu՝ արդէն քազմիցս վկայուած, ռապանուերէնիմ եւ ռապանուերէն-հայերէն զուգահեռներին յատուկ h/k հերթագայութիւնը։

54 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., *Հայոց լեզուի պատմութիւն. նախագրային ժամանակաշրջան*, Երևան 1987, 275։

- Հայերէն պակ «վախ, երկիւղ», արմատ առանձին անգործածական, որից՝ պակնուլ «վախեցալ, ապշիլ, սարսափիլ» (Համեմատել նաեւ *mataku* (*ma-taku*) «վախ, սարսափ» եւ Հայերէն տագնապ «վախ, սարսափ»), ինչի արդիւնքում այն (*kope*) Համեմատելի է դառնում Հայերէն (պՀլ.-ից փոխառութիւն Համարուող) կոտակ «փոքր, կարճահասակ»⁵⁵, կոտիկ «անասունի ձագ», բրբ. (Ախց., Ղրբ.) կուտիկ, կոտիկ «շան ձագ»), նաեւ անյայտ ծագման կուտ, բրբ. (Ազլ., Գոր., Ղրբ., Ողմ.) կօտ, կուդ, գուդ «սերմ, հումդ» բառերի հետ: Գրեթէ Համոզուած կարելի է պնդել, որ այն (*kope-n*) աղերսներ ունի ռապանուերէն *kohio* (կզմխս.) «տղամարդու առնամբամբ» բառի հետ, որի տառացի Հայերէն զուգահեռն է կոխել - (խսկց.) «նքս տանել, մտցնել», «զուգաւորուել, կենակցել» բառը:

6) *ure*₂ 1) «գաւակներ, յետնորդ, ժառանգ»⁵⁶, 2) «սերունդ», 3) «եղբայր» - բնիկ Հայերէն որձ «արու» (աւելորդ չենք Համարում նկատել, որ նոյն *ure*₁ արմատն ունի նաեւ «տղամարդու առնամբամբ» իմաստ), որդի (բրբ. օրթի, օրդի, վօւթի, վուրթի «սերունդ, գաւակ, մանաւանդ արու գաւակ, մանչ»), բրբ. Ուրջու «խորթ որդի», առն, այր «տղամարդ», նաեւ անյայտ ծագման որոջ «գառնուկ»:

7) *uka* «աղջիկ, երիտասարդ կին» - ինչպէս արդէն նշուեց, վերջինս ռապանուերէն *uħa* բառի տարբերակն է (*b/k* լծորդութեամբ), որի ճշգրիտ Համարժէքը Հայերէնում իզական սեռի ցուցիչ -ուհի վերջածանցն է,

8) *poki* «երեսայ» - Հայերէն փոքր, սեռականը՝ փոքու:

Ինչպէս տեսնում ենք, պոլինեզական լեզուների հնագոյն շերտից աւանդուած, միայն ռապանուերէն լեզւում պահպանուած, ազգակցական տարբեր յարաբերութիւններ մատնանշող վերոյիշեալ բոլոր բառերը եւս ունեն բազմաթիւ Հայերէն զուգահեռներ:

* * *

Ի մի բերելով կատարուած վերլուծութիւններն ու Համեմատութիւնները, յանգում ենք հետեւեալ եզրակացութիւնների.

55 Հմմտ. պիլ. *kōtak* «մանուկ, երախայ, փոքր», զմդ. *kutaka-* «փոքրիկ, պլտիկ», պրս. *kōdak* «մանկիկ, փոքրտղայ», քթր. *gudug* «բուռակ», արար. *kūti* «կարճահասակ մարդ» քառերը:

56 ФЕДОРОВА, И., *Мифы и легенды острова Пасхи*, Ленинград 1988, 244.

1) Պոլիեզական լեզուների հիմնական բառապաշարի կարեւոր բաղկացուցիչ՝ ազգակցական եզրերի համեմատութիւնը հայերէնի համապատասխան եզրերի հետ ցոյց է տալիս, որ սեռ եւ ազգակցական կապեր մատնանշող ռապանութիւններն եզրերն ունեն մեծաւ մասամբ բնիկ հայերէն, նաեւ չստուգաբանուած եւ հայերէնում փոխառութիւն համարուող բազմաթիւ զուգահեռներ:

2) Ազգակցական տարատեսակ յարաբերութիւններ արտայայտող բառակապակցութիւնների բաղադրիչները եւս ունեն հայերէն (բնիկ, փոխառեալ համարուող եւ չստուգաբանուած) զուգահեռներ:

3) Յատկանշական ենք համարում այն փաստը, որ համեմատուող եզրերի մէջ չկան վերականգնուած նախաձեւեր, այլ միայն ուղղակի զուգահեռներ:

4) Բոլոր համեմատութիւնները յենում են հնչիւնական որոշակի կայուն օրինաչափութիւնների վրայ, որոնք բնորոշ են ոչ միայն պոլիեզական լեզուներին (ի մասնաւորի՝ ռապանութիւններին), այլեւ հայերէն-ռապանութիւններն ընդհանրութիւններին:

5) Բացայայտուած ընդհանրութիւնների թուաքանակը (ոչ միայն ռապանութիւններն լեզուում առկայ ազգակցական եզրերը, այլեւ ազգակցական տարատեսակ յարաբերութիւններ մատնանշող արտայայտութիւնների բաղադրիչների բնիկ հայերէն զուգահեռները) բաւարար հիմք է տալիս ենթադրելու հայերէնի եւ պոլիեզական լեզուների ցեղակցութիւն, իսկ որակը (բառացի նոյնութիւն կամ կայուն հնչիւնական օրինաչափութիւնների իրացման արդիւնք)՝ նաեւ հայ-պոլիեզական լեզուական յաջորդայնութիւն:

ԼԵՅԼԱ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Summary

SEX AND RELATIONSHIP-DENOTED TERMS IN RAPANUI AND ARMENIAN: COMPARATIVE ETYMOLOGY

LEYLA STEPANIAN

Sex and relationship-denoted terms referring to the language's etymological (archaic) layer are reliable means for family relation identification.

The comparison of relationship terminology in Polynesian languages with the Armenian appropriate word-layer shows that all sex and relationship-denoted Polynesian words, phrases, and expressions have appropriate multiple parallels with native Armenian (included unchecked ones and those of unknown origin): Rap. *nua* "mother" (arch.) – Arm. *nu* "mother, daughter-in-law" (arch.); Rap. *matua/metua* "father, mother, parents" – native Arm. *mayr* "mother"; Rap. *koro2* "father" (arch.) – native Arm. *hayr* (adj. *hor, horu*) "non-relative, stepfather"; Rap. *hagu3* "youngest son", "small, slobbery" – native Arm. *jaq* "chicken, bird cub, calf"; Rap. *ure2* "son" – native Arm. *vordz* "male", *vordi* "son", dialect *urju* "stepchild"; Rap. *aroa* "male, boy" – native Arm. *arn (ayr)* "male"; Rap. *vie* "woman (wife)", *hine* "womanish" (h/k) – native Arm. *kin* "woman (wife)"; Rap. *tao5* "sister-in-law" – native Arm. *tal* "sister-in-law"; Rap. *taga* "young, young man" – native Arm. *tagr/taygr* "brother-in-law"; Rap. *morore* "extra-marital child" – Arm. *mawru (moru)* "not related, stepmother"; Rap. *tama* "child" – native Arm. *zarm* "descendant", *tama iti(t||k)/tama iki* > native Arm. *zarmik*; Rap. *poki* "child", *potu2* "youngest brother child" – Arm. *p'ok'r*, adj. *p'ok'u* "small"; etc.

The number of similarities discovered (in fact, all current terms) and the quality (literal sameness or result of stable phonetic regularities) allow for implying a relationship between **Armenian** and **Polynesian** languages.